

ծենց՝ մոռանաւ եւ ի բաց թողոււ, զայս առնես իմով միջնորդութեամբ՝ դու աստէն ի Զայս կաս, մինչեւ թագաւորն կնքէ եւ տայ բերել առ քեզ. եւ եկեալ բարեաւ առ տէրն Արեաց, զամենայն որ ինչ բարի եւ արժան է, ե՛ւ քում անծինդ եւ որում դու կամիս՝ տայ սիրով եւ կամաւ եւ կատարէ»:

ԴԲ. Եւ խաւսեցեալ զայս ամենայն բանս Նիխորոյ յատենին ընդ Մամիկոնենին Վահանայ եւ ընդ ուխտակից նախարարսն Զայոց որ ընդ նմա էին, եւ լուեալ Մամիկոնենին Վահանայ՝ տայո պատասխանի բանիցն Նիխորոյ եւ ասէր. «Աստուծոյ հաշտութիւն յորժամ է ընդ աշխարհի՝ յառաջահայեաց եւ իմացող մտաց դիւրին է անաշխատ ճանաչել: 2 Յորժամ զիշխանս բարեսէրս տայ եւ լաւածանաւթս եւ աշխարհաշէնս՝ անդէն եւ անդ արժան է նուազամտին գիտել զբարերարութեանս¹ Աստուծոյ այցելութիւն, զոր² սփռելոց է յաշխարհ եւ նորոգելոց, որպէս եւ այժմս ինձ երեւի եւ ամենեցուն: 3 Չի գտերն Արեաց իմ չեւ եւս է տեսեալ. բայց կամիմ տեսանել, եթէ տայ ինձ Աստուած միջնորդութեամբ քո, տեսանել այնպէս՝ որպէս եւ ամենայն քրիստոնեայ անձն կամի³ եւ ախորժայ⁴: 4 Սակայն զքեզ տեսանելով, զոր նոր խաղաղարար եւ առիթ բարւոյ այնպիսւոյ աշխարհի միոյ առաքեալ է, որպիսի Զայքն, եւ մեզ որ աշխարհին մարդիկ եմք՝ կարի հայեցող ակամբ տեսանել, եւ ամենեցուն զինամսն եւ զբարիսն, զոր տալոց է աշխարհին եւ մարդկան որ⁵ յաշխարհին են. քանզի տեսանեմք զքեզ կամաւոր բարւոյ եւ սիրիչ, անծին համարելով զբարի գիւտն եւ զաշխարհին: 5 Իսկ վասն Պերոզի արքայից արքայի բարուցն եւ անձնահաճութեանն զոր ասացեր, անընտրող մտաւք ունելով զծառայս, չընտրել զլաւն ի վատթարէն, զբաջն ի վատէն, զիմաստունն յանմտէն, զվաստակաւորն յանվաստակէն՝ շատ իսկ եւ բաւական լիցի քո տեառն բանն եւ լիով ասացածն: 6 Եւ ես գոհանամ զԱստուծոյ, զի զիս անաշխատ պահեցէք յառնելոյ զըստ հարցման քո զպատասխանիսն: 7 Բայց իմ թեպէտ էր այդ ամենայն տրտունջ զՊերոզէ, ո՛րպէս հանապազ խաբէին զնա եւ զամենայն Արիս արք անպիտանք, ատեցեալք յամենայն սրբասէր մարդկանէ, փախստականք յաշխարհէն ըստ աղտեղի գործոց իւրեանց, լեռնախոյսք⁶, աւազակապետք, արիւնապարտք, հացկատակք⁷, բանորսողք, խաբեբայք, շաղակրատք, անյարուչք, վատատոհմակք, ճանաչելով զանծինս թէ ոչինչ են, եւ կալ իւրիք չկարեն, կասեալք յիրէ, լքեալք

1 Ձ. զբարերարութիւն

2 ՁԱտ. զորս

3 ՏՏ. որպէս ամենայն քրիստոնեայ կամի

4 Ձ. ախորժս

5 Ձ. եւ մարդկան եւ որ

6 ՏՏ. լեռնախոյսք

7 Ձ. հացկատաք